Հավելված

Սպիտակ համայնքի ավագանու

« » հունվարի 2023թ.

թիվ - Ա որոշման

Սպիտակ համայնքի ղեկավարի հաղորդումը Սպիտակ համայնքի 2022 թվականի բյուջեի 4-րդ եռամսյակի կատարման ընթացքի մասին

Սպիտակ համայնքի 2022թ. բյուջեն 4-րդ եռամսյակի կտրվածքով կատարվել է՝

1. **Եկամուտների մասով՝** նախատեսված 2167914,9 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 1867182,4 հազար դրամ:Կատարողականը կազմել է 86,2 տոկոս: Պետք է նշենք, որ պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումների (սուբվենցիաների) մասով նախատեսված 748357,7 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 406052,7 հազար դրամ:Կատարողականը կազմել է 54,2 տոկոս:

Սպիտակ համայնքի բյուջեի եկամուտները՝ առանց պետական բյուջեից կապիտալ ծախսերի սուբվենցիաների՝ նախատեսված 1419557,2 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 1461129,7 հազար դրամ:Կատարողականը կազմել է 103,0 տոկոս

Տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է 241886,8 հազար դրամ:

2. **Ծախսերի կատարման մասով** բյուջեն կատարվել է 68,9 տոկոսով, նախատեսված 2370701,7 հազար դրամի դիմաց դրամարկղային ծախը կազմել է 1634696,1 հազար դրամ:

Վարչական բյուջեի եկամուտները 4-րդ եռամսյակի համար նախատեսված 1372752,2 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 1421564,6 հազար դրամ: Կատարողականը կազմել է 103,6 տոկոս:

-**Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհների (դոտացիա)** գծով եկամուտները նախատեսված 1055508,3 հազար դրամի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 1054105,2 հազար դրամ: Կատարողականը կազմել է 99,9 տոկոս, որից՝ պետական բյուջեից երաժշտական դպրոցում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցման համար 4-րդ եռամսյակի համար նախատեսված 3098,0 հազար դրամի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 1694,8 հազար դրամ:

Վարչական բյուջեի սեփական եկամուտների մասով՝ **(**հարկեր և տուրքեր,այլ եկամուտներ) նախատեսված 317243,9 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 367458,8 հազար դրամ: Կատարողականը կազմել է 115,8 տոկոս:

ա. Գույքային հարկեր անշարժ գույքից՝ 2022թ. 4-րդ եռամսյակի համար նախատեսված

67718,5 հազար դրամի դիմաց փաստացի հավաքագրվել է 59198,2 հազար դրամ: Կատարողականը կազմել է 87,4 տոկոս:

բ.Գույքահարկ փոխադրամիջոցների համար՝2022թ. 4-րդ եռամսյակի համար նախատեսվել է 145682,0 հազար դրամ, հաշվետու ժամանակահատվածում հավաքագրվել է 187292,1 հազար դրամ: Կատարողականը կազմել է 128,5 տոկոս:

գ. Պետական տուրքեր.

Պետական տուրքերի գծով եկամուտները բյուջեով նախատեսված 5800,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 9757,0 հազար դրամ: Կատարողականը կազմել է 168,2 տոկոս: Այդ թվում՝

- Քաղաքացիական կացության ակտերի գրանցման համար, նախատեսված 3000,0 հազար դրամի դիմաց մուտքագրվել է 5621,0 հազար դրամ:
- Նոտարական գործողությունների համար նախատեսված 2800,0 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 4136,0 հազար դրամ:

դ. Տեղական տուրքեր.

Տեղական տուրքերի գծով եկամուտները 2022թ. նախատեսված 10571,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 12107,8 հազար դրամ կամ տեղական տուրքերի գծով բյուջեն կատարվել է 114,5 տոկոսով:Այդ թվում՝

ե. Այլ եկամուտների մասով . -

Մուտքեր տուժերից, տուգանքներից նախատեսված 600,0 դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 650,0 հազար դրամ:

-Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված այլ եկամուտներ հաշվետու ժամանակաշրջանի համար նախատեսվել է 5044,9 հազար դրամ, փաստացի կատարվել է 9141,7 հազար դրամ:

-Գույքի (հողերի) վարձակալություն՝ նախատեսված 18973,5 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 17288,7 հազար դրամ: Կատարողականը կազմում է 91,1 տոկոս:

-Տեղական ինքնակառավարման մարմիններին պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման՝ ՔԿԱԳ առանձնացված ստորաբաժանման ծախսերի ֆինանսավորման համար նախատեսվել է 2890,0 հազար դրամ, ՀՀ պետական բյուջեից փաստացի ֆինանսավորվել է 1999,0 հազար դրամ: Կատարողականը կազմում է 69,2 տոկոս:

զ.Վարչական գանձումների մասով համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց՝ նախատեսված 59964,0 հազար դրամի դիմաց փաստացի հավաքագրվել է 70024,3 հազար դրամ: Կատարողականը կազմում է 116,7 տոկոս, այդ թվում՝

- <u>աղբահանության վճարներ՝</u> նախատեսվել է 30214,0 հազար դրամ,հավաքագրվել է 27419,2 հազար դրամ: Կատարողականը կազմում է 90,7 տոկոս:
- <u>ծնողական միջոցներ</u> (նախադպրոցական կրթություն՝ մանկապարտեզներ, արտադպրոցական կրթություն՝ երաժշտական և գեղարվեստի դպրոցներ,մշակույթի տուն) նախատեսվել է 19200,0 հազար դրամ, փաստացին կատարվել է 26100,0 հազար դրամ, կատարողականը կազմում է 135,9 տոկոս:
- <u>այլ վարչական գանձումներ</u>՝ նախատեսվել է 10550,0 հազար դրամ, հավաքագրվել է 16505,1 հազար դրամ: Կատարողականը կազմում է 156,4 տոկոս:

Վարչական բյուջեի տարեսկզբի մնացորդը կազմել է 13632,9 հազար դրամ:

Ֆոնդային բյուջեի եկամուտներ

Ֆոնդային բյուջեի եկամուտները նախատեսված 1067898,3 դրամի դիմաց փաստացի կազմել են 718353,5 հազար դրամ, այդ թվում՝

-անշարժ գույքի իրացման մասով՝ նախատեսված 39100,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 25313,3 հազար դրամ:

-պետական բյուջեից սուբվենցիաների մասով՝ նախատեսված 748357,7 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 406052,7 հազար դրամ:

-կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ (նվիրատվություն ֆիզիկական և իրավաբանական անձանցից համայնքին) փաստացի նվիրաբերվել է 14251,9 հազար դրամ:

Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե փաստացի հատկացվել է 272735,6 հազար դրամ:

Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է 228253,9 հազար դրամ:

Վարչական բյուջեի ծախսերը՝ նախատեսված 1386385,1 հազար դրամի դիմաց կատարվել են 1119222,5 հազար դրամով կամ կատարողականը կազմել է 80,7 տոկոս:Այդ թվում՝

Ապարատի պահպանման ծախսեր՝ նախատեսված 457962,0 հազար դրամի դիմաց կատարվել են 341204,1 հազար դրամով կամ կատարողականը կազմել է 74,5 տոկոս:

Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ՝ (այդ թվում Սպիտակ համայնքի ՔԿԱԳ) նախատեսված 18660,0 հազար դրամի դիմաց կատարվել են 9415,1 հազար դրամ: Կատարողականը կազմել է 50,4 տոկոս:

Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ՝ նախատեսված 24990,0 հազար դրամի դիմաց կատարվել են 12321,8 հազար դրամ: Կատարողականը կազմել է 49,3 տոկոս:Այդ թվում՝

-Լոռու մարզի Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն ՀԿ:

Քաղաքացիական պաշտպանություն՝ նախատեսված 800,0 հազար դրամի դիմաց կատարվել են 624,0 հազար դրամ:

Տնտեսական հարաբերություններ՝ նախատեսված 56365,1 հազար դրամի դիմաց կատարվել են 41551,9 հազար դրամ: Կատարողականը կազմել է 73,7 տոկոս:Այդ թվում՝

- գյուղատնտեսություն (անասնաբուժական ծառայություն) - նախատեսված 13039,0 հազար դրամի դիմաց կատարվել են 7906,7 հազար դրամ:

- ճանապարհային տնտեսություն նախատեսված 41878,0 հազար դրամի դիմաց կատարվել են 32197,0 հազար դրամ:

- էներգետիկա (արևայինի ֆակտորինգ) նախատեսված 1448,1 հազար դրամի դիմաց կատարվել են 1448,1 հազար դրամ:

Շրջակա միջավայրի պաշպանություն՝ նախատեսված 68434,4 հազար դրամի դիմաց ծախսվել է 56225,3 հազար դրամ: Կատարողականը կազմել է 82,1 տոկոս, որից՝

- աղբահանություն և սանիտարական մաքրում՝ նախատեսված 54274,4 հազար դրամի դիմաց ծախսվել է 52860,3 հազար դրամ, կատարողականը կազմել է 97,4 տոկոս:

-կեղտաջրերի հեռացում՝ նախատեսված 1600,0 հազար դրամի դիմաց ծախս չի կատարվել:

- այլ ծախսեր՝ նախատեսված 12560,0 հազար դրամի դիմաց ծախսվել է 3365,0 հազար դրամ:

Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ՝ նախատեսված 143889,7 հազար դրամի դիմաց ծախսվել է 115554,2 հազար դրամ: Կատարողականը կազմել է 80,3 տոկոս, որից՝

Փողոցների լուսավորություն- նախատեսված 56772,6 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 44424,2 հազար դրամ,

Բնակարանների կոմունալ սպասարկում («Սպիտակի համայնքի բնակարանների և ենթակառուցվածքների սպասարկման գրասենյակ» ՀՈԱԿ) - նախատեսված 72827,1 հազար դրամի դիմաց կատարվել է 63889,4 հազար դրամ:

- Ջրամատակարարում՝ նախատեսված 14290,0 հազար դրամի դիմաց կատարվել է 7240,6 հազար դրամ:

Հանգիստ, մշակույթ, սպորտ և կրոն («Սպիտակի քաղաքային գրադարան» ՀՈԱԿ, «Սպիտակի մշակույթի տուն» ՀՈԱԿ ,համաքաղաքային և սպորտային միջոցառումների կազմակերպում) նախատեսված 80901,5 հազար դրամի դիմաց կատարվել են 57498,5 հազար դրամ: Կատարողականը կազմել է 71,0 տոկոս, այդ թվում՝

Համաքաղաքային և սպորտային միջոցառումների կազմակերպելու համար նախատեսվել է 29771,5 հազար դրամ,փաստացի կատարվել է 10590,2 հազար դրամ:

- «Սպիտակի քաղաքային գրադարան» ՀՈԱԿ- նախատեսվել է 18166,1 հազար դրամ, փաստացի կատարված ծախսերը կազմել են 17780,5 հազար դրամ: Կատարողականը կազմել է 97,9 տոկոս:

- «Սպիտակի մշակույթի տուն» ՀՈԱԿ- նախատեսվել է 26463,9 հազար դրամ, փաստացի կատարված ծախսերը կազմել են 25096,0 հազար դրամ:Կատարողականը կազմել է 94,8 տոկոս:

- Սպիտակի քաղաքային հրապարակի շատրվանների շահագործման և պահպանման համար նախատեսվել է 5100,0 հազար դրամ, փաստացի կատարված ծախսերը կազմել են 4031,6 հազար դրամ: Կատարողականը կազմել է 79,0 տոկոս:

- Հուշարձանների պահպանում և վերանորոգում՝ նախատեսվել է 1400,0 հազար դրամ, փաստացի ծախս չի կատարվել:

-**Կրթություն՝** նախատեսված 242243,0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսվել է 206 517,9 հազար դրամ: Կատարողականը կազմել է 85,3 տոկոս, այդ թվում՝

Նախադպրոցական կրթություն - /Սպիտակի թիվ 1 և 2 մանկապարտեզ, Մեծ Պարնի, Շիրակամուտի, Արևաշողի, Ծաղկաբերի, Շենավանի, Կաթնաջրի գործող և Ջրաշենի առայժմ չգործող մանկապարտեզներ/ – նախատեսվել է 160316,1 հազար դրամ, փաստացի կատարված ծախսերը կազմել են 137949,7 հազար դրամ:Կատարողականը կազմել է 86,0 տոկոս:

Արտադպրոցական կրթություն – (Սպիտակի Երաժշտական դպրոց, Շիրակամուտի Երաժշտական դպրոց, Սպիտակի Գեղարվեստի դպրոց) ՝ նախատեսվել է 68337,8 հազար դրամ, փաստացի կատարված ծախսերը կազմել են 67359,1 հազար դրամ:Կատարողականը կազմել է 98,7 տոկոս:

Միջնակարգ ընդհանուր կրթություն՝ նախատեսվել է 10279,1 հազար դրամ, փաստացի կատարված ծախսերը կազմել են 1209,1 հազար դրամ:

Բարձրագույն մասնագիտական կրթություն՝ նախատեսված 3310,0 հազար դրամի դիմաց ծախս չի կատարվել:

- **Սոցիալական պաշտպանությանն** ուղղված ծախսերը նախատեսվել 17310,0 հազար դրամ՝ հատկացվել է 4 698,0 հազար դրամ:Կատարողականը կազմել է 27,1 տոկոս:

- **Ծերություն** «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ–ի հետ համատեղ իրականաց վող Սպիտակ քաղաքի սոցիալապես անապահով տարեցների, հաշմանդամների և այլ անապահով խավերի առաջնային սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված ծրագրին (սնունդ, բուժօգնություն, իրավական և այլ խորհրդատվություններ) ծրագրի ընդհանուր բյուջեն կազմել է 10800,0 հազար դրամ, որից նախատեսվել 2000,0 հազար դրամ՝ հատկացվել է 1500,0 հազար դրամ:

-**Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե նախատեսվել է հատկացնել 272735,6 հազար դրամ, փաստացի հատկացվել է 272735,6:**

- Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է 228253,9 հազար դրամ:

Ֆոնդային բյուջեի ծախսեր

Ֆոնդային բյուջեով հաշվետու ժամանակահատվածում նախատեսվել է 1296152,2 հազար դրամի ծախսեր դրամարկղային ծախսը կազմել է 813522,3 հազար դրամ, որից՝

- ոռոգում դասակարգման ծրագրերով – կապիտալ ծախսերը կազմել է 119383,4 հազար դրամ:
- գազաֆիկացում դասակարգման ծրագրերով – կապիտալ ծախսերը կազմել է 16757,8 հազար դրամ:
- էլեկտրաեներգիա դասակարգման ծրագրերով – կապիտալ ծախսերը կազմել է 10450,0 հազար դրամ:
- ճանապարհային տնտեսություն և տրանսպորտ դասակարգման ծրագրերով – կապիտալ ծախսերը կազմել է 332467,9 հազար դրամ:
- շրջակա միջավայրի պաշտպանություն դասակարգման ծրագրերով – կապիտալ ծախսերը կազմել է 9601,0 հազար դրամ:
- բնակարանային շինարարություն դասակարգման ծրագրերով – կապիտալ ծախսերը կազմել է 11573,5 հազար դրամ:
- ջրամատակարարում դասակարգման ծրագրերով – կապիտալ ծախսերը կազմել է 125932,4 հազար դրամ:
- փողոցների լուսավորություն դասակարգման ծրագրերով – կապիտալ ծախսերը կազմել է 101256,1 հազար դրամ:
- հանգիստ, մշակույթ և կրոն դասակարգման ծրագրերով – կապիտալ ծախսերը կազմել է 79018,9 հազար դրամ:
- այլ կապիտալ ծախսեր՝ 7081,0 հազար դրամ:

- վարչական բյուջեի տարեվերջի մնացորդը կազմում է –315974,9 հազար դրամ:
- ֆոնդային բյուջեի տարեվերջի մնացորդը կազմում է – 133085,1 հազար դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՖԻՆԱՆՍՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ,
ԳՆՈՒՄՆԵՐԻ, ԳՈՎԱԶԴԻ,ԱՌԵՎՏՐԻ ԵՎ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ _____ Վ.ԱՊՐԵՍՅԱՆ